ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07»

ք. Երևան «19» ապրիլի 2019 թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 49 999 992.72 (քառասունինը միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսուներկու ՀՀ դրամ, յոթանասուներկու լումա), ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և

պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 31 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2
ՀՎՀ՝	ՀՎՀ՝ 1930048861340100
ՀԿՀՀ՝ 02583241	ՀԿՀՀ՝ 00885285
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԿոնվերսԲանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տիգրան Միքայելյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«19» ապրիլի 2019 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	18111100/501	**Արտադրական հատուկ հագուստ (հանդերձանք)**	Հայաստանի Հանրապետություն	**Արտադրական հատուկ հագուստ (հանդերձանք)** **1) գլխարկ կեպի /տղամարդու/, գլխարկանշանով (Ձև 2)** ա) բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար՝ Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ² խտությամբ և բաղկացած է թասակից երկարացված գլխարկահովիարից: Երկու կողմից ունի երկուական օդանցք: Գլխարկի առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշանը:	հատ	71 839.07	49 999 992.72	**696**	**Ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9**	**696**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60 օրացուցային օրվա ընթացքում**

				Գլխարկանշանը (կոկարդը) պատրաստվում է ոսկեգույն ձուլածո մետաղից՝ մետաղյա փարթամ դափնեճյուղերով՝ 70 X 38 մմ չափսերով, որի մեջտեղում՝ ատամնավոր էլիպսաձև շրջանակի մեջ, պատկերված են դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանի սուրը, վահանը և կշեռքը (Ձև 5): Աստառը պատրաստվում է բնական մետաքսից (8-C5-BШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ² խտությամբ), ներսի ժապավենը՝ բնական կաշվից՝ 30 մմ լայնությամբ: Գլխարկի թասակի բարձրությունը 8-9 սմ է: Հետևի մասում առկա է գլխարկի թասակի չափը փոխելու գոտի՝ կարգավորման սեղմակներով: բ) կրտսեր և առաջատար պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար՝ Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ ² խտությամբ և բաղկացած է թասակից երկարացված							

				գլխարկահովիարից: Երկու կողմից ունի երկուական օդանցք: Գլխարկի առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշանը: Գլխարկանշանը (կոկարդը) պատրաստվում է ոսկեգույն ծուլածո մետաղից 28 X 38 մմ չափսերով, որի մեջտեղում՝ ատամնավոր էլիպսաձև շրջանակի մեջ պատկերված են դատական կարգադրիչների խորհրդանշանի սուրը, վահանը և կշեռքը (Ձև 5): Աստառը պատրաստվում է բնական մետաքսից (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ² խտությամբ), ներսի ժապավենը՝ բնական կաշվից՝ 30 մմ լայնությամբ: Գլխարկի թասակի բարձրությունը 8-9 սմ է: Հետևի մասում առկա է գլխարկի թասակի չափսը փոխելու գոտի՝ կարգավորման սեղմակներով: **2) գլխարկ պիլոտկա /կանացի/, գլխարկանշանով (Ձև 4)** Պատրաստվում է մուգ կապույտ գույնի, կիսաբրոյա (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ² խտությամբ,							

				բաղկացած երկարացված հատակի 2 մասից, 2 պատից և կենտրոնական մասում իրար վրա ծալվող 2 փեշիկից: Վերծալված եզրակարերը մուգ կարմիր գույնի (2581 արտիկուլի մահուդե կտորից) են և ձախ կողմում ունեն 3 օդանցք: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշանը (կոկարդը), որը պատրաստվում է ոսկեգույն ծուլածո մետաղից՝ 28 X 38 մմ չափսերով, որի մեջտեղում՝ ատամնավոր էլիպսաձև շրջանակի մեջ պատկերված են դատական կարգադրիչների խորհրդանշանի սուրը, վահանը և կշեռքը(Ձև 5): Աստառը պատրաստվում է բնական մետաքսից (8-C5-BLU արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ² խտությամբ), իսկ ներսի ժապավենը բնական կաշվից՝ 30 մմ լայնությամբ: **3) բաճկոն տղամարդու /հանովի ուսադիրներով (2 հատ)/, թևքանշանով, դրոշով (Ձև 7)** Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ ² խտությամբ,							

				բնական մետաքսե աստառով(8-C5-ԲՍ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ² խտությամբ): Բաճկոնը առջևի մասում կոճկվում է կայծակնաճարմանդով, իսկ գոտեմասում՝ 55 սմ լայնքով ու 12-18 սմ երկարությամբ, ներկարված առաձգական ժապավենով: Թիկնամասի, լանջափեշերի կրծքամասով և թևքերի թեզանիքների կտրվածքների միացման տեղերով անցնում է 2,5 մմ լայնքով մուգ կարմիր երիզ (կանտ) (2581 արտիկուլի մահուդե կտորից): Բաճկոնի վրա ներկարված են կայծակնաճարմանդով կոճկվող 2 կողային գրպան, ծոցագրպաններ, որոնցից ձախը կոճկվող է: Բաճկոնի վրա տեղադրված են հանովի ուսադիրների համար նախատեսված 2-ական ամրակներ: Բաճկոնի օձիքը կանգուն է, մշակված է մեկ կտորից: Բաճկոնի վրա առկա է թևքանշան, որը հանդիսանում է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանիշը՝							

				համազգեստի ձախ թևքին՝ ուսակարից 80 մմ ներքև կարվող 80 X 100 մմ չափսերով: Թևքանշանի ներքևում զետեղված են դափնեճյուղեր, որոնց մեջտեղում պատկերված է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը, վերևում ոսկեգույն (դեղնավուն) տառերով գրված են «ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը (Չև 20): Իսկ աջ թևքին առկա է Հայաստանի Հանրապետության դրոշը (8-6 սմ), ուսակարից 80 մմ ներքև: **4) բաճկոն կանացի /հանովի ուսադիրներով (2 հատ)/, թևքանշանով, դրոշով (Չև 7)** Համապատասխանում է տղամարդու բաճկոնի սահմանված նկարագրությանը, սակայն պատրաստվում է կրծքամասում սեղմոններով և կոճկվում է ձախ կողմից: **5) տարազաբաճկոն, ուսադիրներով (2 հատ), թևքանշանով, դրոշով, խորհրդաշանով**							

				Կարվող ուսադիրներով, որը պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ² խտությամբ բնական մետաքսե աստառով (8-C5-BLU արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ² խտությամբ), կտորի և աստառի միջև որակյալ ներդիրով (խոլոստով), իսկ օձիքը և թևածալքերն ունեն մուգ կարմիր եզրաշերտ՝ 2,5 մմ լայնությամբ (2581 արտիկուլի մահուտե կտորից): Թևածալքերի վրա առկա են երեք կոճակներ (Չև 6): Ձախ թևքին առկա է թևքանշան, իսկ աջ թևքին դրոշ: Իսկ օձիքի վրա ամրացվում է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը: ա) արդարադատության լեյտենանտից մինչև կապիտանի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար միակոճկուն է՝ դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանի պատկերով, 4 ոսկեգույն կոճակներով, մարմինը կիսագրկող հարթ մակերեսներով,							

				հետծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով: Տարազաբաճկոնը աջ և ձախ կողմերից ունենում է կափույրով ծածկվող կտրվածքով գրպաններ, իսկ ձախ մասում՝ կոճկվող ծոցագրպան (Ձև 6), բ) արդարադատության մայորից մինչև գնդապետի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար, որը երկփեղկանի և երեք կոճականի է, թիկնամասի ներքևում առանց կտրվածքի, իսկ օձիքի վրա ամրացվում է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը (Ձև 6), 6) **տոնական գլխարկ, գլխարկանշանով** Պատրաստվում է կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ ^{2} խտությամբ) և ունի մուգ կապույտ թավշագլխարկաբոլորք, իսկ գլխարկագագաթի և գլխարկաբոլորքի եզրով անցնում է մուգ կարմիր գույնի՝ 2,5 մմ լայնությամբ, եզրաշերտ: Գլխարկաբոլորքի վրա երկու ոսկեգույն կոճակներով ամրացվում է ոսկեգույն							

				ցանցահյուսազարդով երկշերտ հյուսված կապը (քուղը), իսկ առջևի կենտրոնական մասում՝ գլխարկանշանը: Գլխարկանշանը (կոկարդը) պատրաստվում է ոսկեգույն ձուլածո մետաղից՝ մետաղյա փարթամ դափնեճյուղերով՝ 70 X 38 մմ չափսերով, որի մեջտեղում՝ ատամնավոր էլիպսաձև շրջանակի մեջ, պատկերված են դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանի սուրը, վահանը և կշեռքը (Չև 5): Գլխարկահովիարը երկարացված է, սև գույնի և լաքապատ: Գլխարկի աստառը բնական մետաքսից է, ներսի ժապավենը բնական կաշվից՝ 30 մմ լայնությամբ (Չև 1), **7) տաբատ /տղամարդու/** ազատթող փողքերով, պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ ² խտությամբ, ուղիղ է, առանց ծալքերի, ունի բնական մետաքսյա աստառ (8-C5-ԲԱՍ արտիկուլից մուգ կապույտ կտորից							

				100գ/մ² խտությամբ) և մուգ կարմիր եզրաշերտ (2581 արտիկուլի մահուդե կտորից): Տաբատի գոտին գոտեմակօղերով է, կոճկվում է աջ կողմից 2 կոճակով, գրպանները թեք են, ներկարված և ունեն կայծակնաճարմանդ: Տաբատի հետևի շերտամասի աջ կողմում առկա է կափույրով կոճկվող ներկարված գրպան: Տաբատի առջևի մասի յուրաքանչյուր կողմում մշակվում է մեկական սեղմոն՝ արդուկի գծի ուղղությամբ, իսկ ետևի մասի յուրաքանչյուր կողմում՝ երկուական սեղմոն: Տաբատի գոտին ունի 55 մմ լայնություն, գոտու վրա կարվում է 8 կամրջակ, որոնց երկարությունը 55 մմ է, լայնությունը՝ 1,8 սմ, իսկ տաբատի կողքի գրպաններն ունեն 3,5 սմ թեքություն: Նույնատիպ և նույն քանակի կամրջակները կարվում են նաև կիսաշրջազգեստին և կանացի տաբատին (Չև 7).							
				8) տաբատ /կանացի/ Կանացի տաբատը կարվում է նույն ձևով, կոճկվում է ձախ կողմում, առանց ետևի							

				գրպանի: **9) կիսաշրջազգեստ** Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ² խտությամբ, բնական մետաքսե աստառով (8-C5-BШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ² խտությամբ)երկարությունը մինչև ծնկները, ունի երկկողմանի սեղմոններ, գոտին՝ գոտեմակօղերով, հետնամասում 15 սմ երկարությամբ փակ բացվածքով: Կիսաշրջազգեստը հետևի մասում կոճկվում է մեկ կոճակով և ծածկված է կայծակնաճարմանդով (Չև 7): **10) վերնաշապիկ /կարճաթև/ ուսադիրներով (2 հատ), թևքանշանով** Կարճաթև վերնաշապիկ (բաց կապույտ և սպիտակ), որը պատրաստվում է 60% բամբակյա խիտ կտորից 40% պոլիեսթեր, 190գ/մ², հանվող ուսադիրներով, ծալովի օձիքով: Վերնաշապիկը կոճկվում է 7 կոճակով, վերևի մասում առանց կոճակի: Առաջամասերին մշակված են ձևավոր							

				ծալքով և կափույրով գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ կոճակով: Վերնաշապիկի ներքևի մասում կարվում է 55 մմ լայնությամբ գոտի՝ կողքային մասերում 12-18 սմ երկարությամբ ներկարված առաձգական ժապավենով: Առջևի մասի գոտին կոճկվում է 2 կոճակով: Կանացի վերնաշապիկը՝ առջևից գրպանների տակից մինչև գոտին, ունի սեղմոն և կոճկվում է ձախից (Չև 12): Ձախ թևքին առկա է թևքանշան: **11) վերնաշապիկ /երկարաթև/ , թևքանշանով** Երկարաթև վերնաշապիկ (բաց կապույտ և սպիտակ), որը պատրաստվում է 60% բամբակյա խիտ կտորից 40% պոլիեսթեր, 190գ/մ², հանվող ուսադիրներով, ծալովի օձիքով: Վերնաշապիկը կոճկվում է 8 կոճակով, վերևի մասում առանց կոճակի: Առաջամասերին մշակված են ձևավոր ծալքով և կափույրով գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ կոճակով: Վերնաշապիկի ներքևի մասում կարվում է 55 մմ							

				լայնությամբ գոտի՝ կողքային մասերում 12-18 սմ երկարությամբ ներկարված առաձգական ժապավենով: Առջևի մասի գոտին կոճկվում է 2 կոճակով: Երկարաթև վերնաշապիկը ավելի կոշտ օձիքով հարմարեցվում է փողկապի հետ: Կանացի վերնաշապիկը՝ առջևից գրպանների տակից մինչև գոտին, ունի սեղմոն և կոճկվում է ձախից (Ձև 12): Ձախ թևքին առկա է թևքանշան: **12) սվիտեր /կարճաթև/, թևքանշանով, դրոշով** Պատրաստվում է բաց կապույտ գույնի տրիկոտաժից (60-70% բամբակյա խտությամբ), խիտ գործվածքով, հանովի կոշտ ուսադիրների ամրակով, կոշտ օձիքով: Առջևի մասում ունի բացվածք, որը կոճկվում է 3 բաց կապույտ կոճակներով: Սվիտերի փեշերը երկտակ են, առաձգական գործվածքով: Ձախ կրծքավանդակի վրա առկա է վրադիր՝ բաց կապույտ կտորից՝ 14,5 X 12 սմ չափերով, կափույրով, բաց կապույտ կոճակով կոճկվող գրպանով:							

				Ուսադիրների մասը նույնպես կարված է բաց կապույտ բամբակյա կտորից: Կանացի սվիտերը կոճկվում է ձախից: Սվիտերի բացվածքի վերին մասը՝ 5-7 սմ է և չի կոճկվում (Ձև 13): Ձախ թևքին առկա է թևքանշան, իսկ աջ թևքին դրոշ: **13) սվիտեր /ձմեռային/; ուսադիրներով (2 հատ), թևքանշանով, դրոշով** Մուգ կապույտ, բրդյա (50 % բուրդ, 50 % ակրիլ, 700-800 գր. քաշով), ուսերը և թևքերի արմունկի մասում պատված են մուգ կապույտ կտորով: Օձիքը՝ շրջանաձև բացվածքով, հավաքովի գործվածքով: Ձախ կրծքավանդակին առկա է շերտակարով, վրադիր կափույրով, կոճկվող գրպան՝ 14,5 X 12 սմ չափսերով: Ունի ուսադիրների համար նախատեսված լեզվակ, իսկ ուսադիրները կտորից են՝ հանովի, մեկ կոճակով կոճկվող: Գրպանի և ուսադիրների լեզվակի կոճակները մետաղական են՝ մուգ կապույտ գույնի (Ձև 14): Ձախ թևքին առկա է թևքանշան, իսկ աջ թևքին դրոշ:							

				14) տղամարդու փողկապ ամրակով Մուգ կապույտ գույնի, դեղին ամրակով, երկարությունը՝ 55-57 սմ, պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում սուր անկյունով, վերևում՝ եռանկյուն հանգույցով: Հանգույցից 3-3,5 սմ ներքև ասեղնագործված է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը՝ ոսկեգույն գործվածքով (Ձև 16): **15) կանացի փողկապ /երկթև բանտ/** Թևերն ունեն 10 սմ երկարություն, 4,5 սմ լայնություն, 45 աստիճանի բացվածք: Բանտի մեջտեղում ամրացվում է ոսկեգույն, 1 սմ տրամագծով դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը (Ձև 17):							

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՁԵՎԵՐԸ, ՈՒՍԱԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ <<ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՁԳԵՍՏԻ, ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՁԳԵՍՏԻ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 43-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 1517-Ա ՈՐՈՇՄԱՆ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ՁԵՎԵՐԻ ՔԱՆԱԿՆԵՐԸ՝ ԸՍՏ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՑԱՆԿԵՐԻ:

Գնման առարկայի 1-9 կետերում ներառված ձևերը պետք է ունենան միևնույն գունային գամմա:
Ուսադիրների հիմքի գույնը պետք է համապատասխանի վերը նշված առարկաների գույնին:

Ապրանքների չափսերը պետք է վերցվեն Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տեղակայված նստավայրերում /կից ներկայացվող ցանկով/ աշխատող դատական կարգադրիչներից՝ այցելությունները նախորոք համաձայնեցնելով պատվիրատուի հետ ((010) 209-705, 096-290-393): Թափուր պաշտոնների դեպքում՝ չափսերը համաձայնեցվեն պատվիրատուի հետ: Պատվիրատուն պարտավոր է տրամադրել չափսերը, hashvap.karg@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով գրավոր հարցումը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Անհրաժեշտության դեպքում, պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Ապրանքների փաթեթավորումը՝ լրակազմով, պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի (եթե այդպիսիք կան), պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, խնամքի վերաբերյալ տեղեկատվությունը:

Տղամարդու մեկ լրակազմը պետք է ներառի 1 հատ գլխարկ կեպի, 1 հատ բաճկոն, 2 հատ տաբատ, 1 հատ վերնաշապիկ /կարճաթև/, 1 հատ վերնաշապիկ /երկարաթև/, 2 հատ սվիտեր /կարճաթև/, 1 հատ սվիտեր /ձմեռային/, 1 հատ փողկապ, գլխավոր և բարձրագույն պաշտոն զբաղոցնող տղամարդու լրակազմում նաև 1 հատ տարազաբաճկոն, 1 հատ տոնական գլխարկ:

Կանացի մեկ լրակազմը պետք է ներառի 1 հատ գլխարկ պիլոտկա, 1 հատ բաճկոն, 1 հատ տաբատ, 1 հատ կիսաշրջազգեստ, 1 հատ վերնաշապիկ /կարճաթև/, 1 հատ վերնաշապիկ /երկարաթև/, 2 հատ սվիտեր /կարճաթև/, 1 հատ սվիտեր /ձմեռային/, 1 հատ կանացի փողկապ:

* *Վաճառողը կարող է ապրանքները մատակարարել պայմանագրով սահմանված ժամկետից ավելի կարճ ժամկետում:*

** *Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը: Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

[redacted]	[redacted]
գլխարկ կեպի /տղամարդու/, գլխարկանշանով՝ այդ թվում	**586**
բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար	26
կրտսեր և առաջատար պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար	560
գլխարկ պիլոտկա /կանացի/, գլխարկանշանով	**110**
բաճկոն տղամարդու /հանովի ուսադիրներով (2հատ)/, թևքանշանով, դրոշով	**586**

բաճկոն կանացի /հանովի ուսադիրներով (2հատ)/, թևքանշանով, դրոշով	**110**
Տարազաբաճկոն, ուսադիրներով (2 հատ), թևքանշանով, դրոշով, խորհրդանշանով՝ այդ թվում	**30**
լեյտենանտից կապիտան	7
մայորից գնդապետ	23
Տոնական գլխարկ, գլխարկանշանով	**30**
Տաբատ /տղամարդու/	**1 172**
Տաբատ /կանացի/	**110**
կիսաշրջազգեստ	**110**
վերնաշապիկ /կարճաթև/, ուսադիրներով (2 հատ), թևքանշանով	**696**
կանացի	110
տղամարդու	586
վերնաշապիկ /երկարաթև/, թևքանշանով	**696**
կանացի	110
տղամարդու	586
սվիտեր /կարճաթև/, թևքանշանով, դրոշով	**1 392**
կանացի	220
տղամարդու	1172
սվիտեր /ձմեռային/, ուսադիրներով (2 հատ), թևքանշանով, դրոշով	**696**
կանացի	110
տղամարդու	586
փողկապ ամրակով	**586**
կանացի փողկապ /երկթև բանտ/	**110**

Կոչումներ

հ/հ	կոչման անվանումը	սահմանված քանակ
1	կրտսեր սերժանտ	5
2	սերժանտ	76
3	ավագ սերժանտ	124
4	ավագ	137
5	ենթասպա	146
6	ավագ ենթասպա	30
7	լեյտենանտ	100
8	ավագ լեյտենանտ	20
9	կապիտան	21
10	մայոր	22
11	փոխգնդապետ	11
12	գնդապետ	4
Ընդամենը		696

Ց Ա Ն Կ

Դատական կարգադրիչների ծառայության բաժինների ու բաժանմունքների և հասցեների

ՀՀ վճռաբեկ դատարանի բաժին	Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի բաժին	Հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 23

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և վարչական դատարանների բաժին	Հասցե՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 23
ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի բաժին	Հասցե՝ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9
Երևան քաղաքի դատարանի Մալաթիա բաժին /ՀՀ սնանկության դատարան/	Հասցե՝ ք. Երևան, Օտյան փողոց 53/2
Երևան քաղաքի դատարանի Կենտրոն բաժին	Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1
Երևան քաղաքի դատարանի Ավան բաժին	Հասցե՝ ք. Երևան, Գյուլիքևխվյան 20
Երևան քաղաքի դատարանի Շենգավիթ բաժին	Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պողոտա 24/1
Երևան քաղաքի դատարանի Էրեբունի բաժին	Հասցե՝ ք. Երևան, Մովսես Խորենացի 162ա
Երևան քաղաքի դատարանի Արաբկիր բաժին	Հասցե՝ ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10
Երևան քաղաքի դատարանի Աջափնյակ բաժին	Հասցե՝ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս 40

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Կոտայքի մարզի դատարանի բաժնի Հրազդանի բաժանմունք	Հասցե՝ ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13-րդ փող., 1/1
Կոտայքի մարզի դատարանի բաժնի Չարենցավանի բաժանմունք	Հասցե՝ ք. Չարենցավան, Երիտասարդական 2/1
Կոտայքի մարզի դատարանի բաժնի Եղվարդի բաժանմունք	Հասցե՝ ք. Եղվարդ, Չարենցի 29
Կոտայքի մարզի դատարանի բաժնի Աբովյանի բաժանմունք	Հասցե՝ ք. Աբովյան, Կոտայքի 8

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Արարատի և Վայոց Ձորի մարզերի դատարանի Արտաշատի բաժանմունք	Հասցե՝ ք. Արտաշատ, Շահումյան 19
Արարատի և Վայոց Ձորի մարզերի դատարանի Մասիսի բաժանմունք	Հասցե՝ ք. Մասիս, 3-րդ թաղամաս, Հերացու փողոց 26/31
Արարատի և Վայոց Ձորի մարզերի դատարանի Վեդու բաժանմունք	Հասցե՝ ք. Վեդի, Մ.Խաչատրյան 1
Արարատի և Վայոց Ձորի մարզերի դատարանի Եղեգնաձորի բաժանմունք	Հասցե՝ ք. Եղեգնաձոր, Միկոյան 23
Արարատի և Վայոց Ձորի մարզերի դատարանի Վայքի բաժանմունք	Հասցե՝ ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Արմավիրի մարզի դատարանի Արմավիրի բաժանմունք	Հասցե՝ ք. Արմավիր, Հանրապետության 41
Արմավիրի մարզի դատարանի Էջմիածնի բաժանմունք	Հասցե՝ ք. Էջմիածին, Կամոյի 15

Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Արագածոտնի մարզի դատարանի Աշտարակի բաժանմունք	Հասցե՝ ք. Աշտարակ, Էջմիածնի խճուղի 65
Արագածոտնի մարզի դատարանի Ապարանի բաժանմունք	Հասցե՝ ք. Ապարան, Գայի 25
Արագածոտնի մարզի դատարանի Թալինի բաժանմունք	Հասցե՝ ք. Թալին, Խանջյան 13

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Տավուշի մարզի դատարանի Իջևանի բաժանմունք	Հասցե՝ Իջևան, Նալբանդյան 1/1
Տավուշի մարզի դատարանի Դիլիջանի բաժանմունք	Հասցե՝ ք. Դիլիջան, Շահումյան 15

Տավուշի մարզի դատարանի Նոյեմբերյանի բաժանմունք	Հասցե՝ ք. Նոյեմբերյան, Կամոյի 2
Տավուշի մարզի դատարանի Բերդի բաժանմունք	Հասցե՝ ք. Բերդ, Այգեստան 49ա

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Գեղարքունիքի մարքի դատարանի Գավառի բաժանմունք	Հասցե՝ ք. Գավառ, Սայադյան 18
Գեղարքունիքի մարքի դատարանի Սևանի բաժանմունք	Հասցե՝ Սևան, Աբովյան 6/1
Գեղարքունիքի մարքի դատարանի Մարտունու բաժանմունք	Հասցե՝ ք. Մարտունի, Շահումյան 5
Գեղարքունիքի մարքի դատարանի Վարդենիսի բաժանմունք	Հասցե՝ ք. Վարդենիս, Ազգալդյան 2
Գեղարքունիքի մարքի դատարանի Ճամբարակի բաժանմունք	Հասցե՝ ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 99/1

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Լոռու մարզի դատարանի Վանաձորի բաժանմունք	Հասցե՝ ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 6
Լոռու մարզի դատարանի Ալավերդու բաժանմունք	Հասցե՝ ք. Ալավերդի, Թումանյան 1
Լոռու մարզի դատարանի Տաշիրի բաժանմունք	Հասցե՝ ք. Տաշիր, Ջահուկյան 19
Լոռու մարզի դատարանի Սպիտակի բաժանմունք	Հասցե՝ ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 2/10
Լոռու մարզի դատարանի Ստեփանավանի բաժանմունք	Հասցե՝ ք. Ստեփանավան, Սուրբ Վարդանի 53

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

...արզի դատարանի Կապանի բաժանմունք	Հասցե՝ ք. Կապան, Մելիք Ստեփանյան 3/2
Սյունիքի մարզի դատարանի Գորիսի բաժանմունք	Հասցե՝ ք. Գորիս, Անկախության 4/1
Սյունիքի մարզի դատարանի Սիսիանի բաժանմունք	Հասցե՝ ք. Սիսիան, Գարեգին Նժդեհի 6
Սյունիքի մարզի դատարանի Մեղրու բաժանմունք	Հասցե՝ ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 24/1

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բաժին

Շիրակի մարզի դատարանի Գյումրու բաժանմունք	Հասցե՝ ք. Գյումրի, Անկախության հրապարակ 7
Շիրակի մարզի դատարանի Մարալիկի բաժանմունք	Հասցե՝ ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՀ՝
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2
ՀՀ՝ 1930048861340100
ՀՎՀՀ՝ 00885285
«...ԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրեն՝ Լ. Գրիգորյան

/ստորագրություն/

Հավելված N 2
«19» ապրիլի 2019 թ. կնքված
«ԴՐ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20– թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18111100/501	Արտադրական հատուկ հագուստ (հանդերձանք)													

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎ՝
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Տնօրեն՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԴԵՐԶԱԿ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2
ՀՎ՝ 1930048861340100
ՀՎՀՀ՝ 00885285
«ԴեՐԶԱԿԲանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Լ. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 19 » ապրիլի 2019 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 19 » ապրիլի 2019 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն